

- ծին մարդոյ. եւ մեք ասէաք, եթէ մեք այս-
 պէս ուսեալ եմք: Արդ եկեսցուք ի սկսեալ
 180 դրուցն մեր վասն հիւանդաց. պառկեցնեն
 զնա. զայ հազիմն եւ իմանայ զցաւն եւ ըստ
 այնմ հրամայէ տալ կերակուր. եւ երբ ժամ
 լինի կերակրոյ, զաշ սպասաւոր մի եւ բերէ
 սղօլ, որ է սեղան. նոյնպէս եւ յամենայնի.
 185 ապա զայ միւսն եւ բերէ փէշխուն սալտակ
 եւ սփռէ ի վերայ սեղանին. եւ այլն զայ բերէ
 դրգալ եւ սուր դանակ, այլն՝ աղ եւ հաց, եւ
 մինն գինի ջրախառն եւ ապա կերակուր: Եւ
 այսպէս ամէն մէկ մէկ խզմէթ մի ունին. եւ
 190 զկնի հացին դարձեալ ժողովեն: Եւ իրիկունն
 զայ մինն վերցնէ զհիւանդն եւ միւսն զտօ-
 շակն զուզէ. ապա պառկեցնեն զնա եւ դնեն
 մերձ աման մի վասն կարեաց. զոր յառաւօ-
 տուն եկեալ առնու տանի եւ վօթէ եւ լուս-
 195 նայ: Եւ ամէն շարաթ զտօշկին երեսն եւ
 զչարշաֆն փոխեն: Եւ ամէն կիրակի քահա-
 նայն զայ խոտովանցնէ եւ հաղորդէ. եւ սուրբ
 պատարագն տեսնու. զի սբիթալն մատուռ
 կայ, խորան, սեղան եւ այլն:
- 200 Արդ տեսէք թէ ո՞րպէս սէր, հարկիւք եւ
 պատիւ կ'առնեն ազքատ հիւանդաց, որ եղ-
 բայր եղբօր չ'առներ. եւ ոչ կին՝ առն այս-
 պէս սրտանց ծառայութիւն: Դարձեալ կայ
 ի նմա ամէն ցաւոց դեղ. ով երթայ ուզէ՝
 205 մուֆտ կու տան. եւ հազիմք շուրջ կու գան
 եւ տան հիւանդացն՝ ոմանց հասլ, ոմանց՝
 շարպաթ, ոմանց մլհամ, այլոց եախու եւ